**Արձանագրություն N 2**

**<<ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/9>> ծածկագրով Ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 27.04.2018թ
ժամը 17:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Բաղինյան

Հանձնաժողովի անդամներ ՝ Տ. Ղուկասյան

Շ. Իսախանյան

Ս. Զաքոյան

Գ. Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

**1. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/9>> ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի բացման մասին**

---

*(Հ. Բաղինյան)*

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2018 թվականի ապրիլի 26-ին, ժամը 11:30-ին:

բ) Գնման առարկայի նախահաշվային արժեքը կազմում է 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ:

գ) Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

*ՀՀ դրամ*

| *Հ/Հ* | *Մասնակցի անվանումը* | *Հասցե* | *Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)* | *ԱԱՀ* | *Առաջարկված ընդհանուր գինը* |
|---|---|---|---|---|---|
| 1 | <<Զենտա>> ՍՊԸ | ՀՀ, Ծարավ Աղբյուրի փ, 131/6 շենք, բն. 5 | 5 000 000 | - | 5 000 000 |

դ) Գնման ընթացակարգի մասնակցի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ <<Զենտա>> ՍՊԸ-ի հայտով ներկայացված հավելված 2.1-ում նշված չէ անձը հաստատող փաստաթղթի տեսակը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 41-րդ կետի պահանջը՝ գնահատող հանձնաժողովը 26.04.2018թ-ի ժամը 11:30-ի նիստի ընթացքում որոշել է ծանուցել վերը նշված կազմակերպությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունը և հաջորդ նիստը հրավիրել մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը շտկելուց հետո, բայց ոչ ուշ, քան 02.05.2018թ.-ին ժամը 11:00-ին:

<<Զենտա>> ՍՊԸ կողմից 27.04.2018թ. ժամը 11:01 դրությամբ շտկվել է արձանագրված անհամապատասխանությունը

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

**2. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/9>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մասին**

---

*(Հ. Բաղինյան)*

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով ընթացակարգին ներկայացված հայտը գնահատվել է հետևյալ կերպ.

| *Մրցույթում զբաղեցրած տեղը* | *Մասնակցի անվանումը* | *Հայտի գնահատականը* |
|---|---|---|
| 1 | <<Զենտա>> ՍՊԸ | բավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

**3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին**

---

(Հ. Բաղինյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

**4. <<ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/9>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

---

(Հ. Բաղինյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման պատասխանը ստանալուց հետո, բայց ոչ ուշ, քան 2018 թվականի մայիսի 5-ին ժամը 16:30-ին ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------------------------------------- Հ. Բաղինյան

Անդամ՝ ---------------------------------------- Տ. Ղուկասյան

---------------------------------------- Շ. Իսախանյան

---------------------------------------- Ս. Զաքոյան

---------------------------------------- Գ. Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ ---------------------------------------- Տ. Վասիլյան